ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հունիսի 2021 թվականի №-Ա
ք.Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի մայիսի 4-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով փոփոխել Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 19-ի №124Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ այն համարելով ոչ իրավաչափ և անվավեր ճանաչման ենթակա: Որպես վարչական բողոքի հիմնավորում՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

1) ինչպես նախքան վարչական վարույթի հարուցումը, այնպես էլ դրանից հետո Հանձնաժողովին ուղղված 2021 թվականի մարտի 3-ի №ՄՇ/4547, մարտի 12-ի №ՄՇ/5458, մարտի 25-ի №ՄՇ/6940, ապրիլի 2-ի №ՄՇ/7913 և №ՄՇ/7914 գրություններով Ընկերությունը ներկայացրել է հիմնավորումներ այն մասին, թե ինչ հանգամանքներով է պայմանավորված համապատասխան մերժումը: Մերժման վերաբերյալ առավել մանրակրկիտ հիմնավորումներ ներկայացվել են 2021 թվականի ապրիլի 2-ի №ՄՇ/7914 գրությամբ, որի 7-րդ կետով նշվել է, որ Ընկերության կողմից ուսումնասիրվել են Արզական-Երևան ջրատարի վրա փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման հնարավորությունները, որի արդյունքում Ընկերությունը հրաժարվել է այս ջրատարի վրա «ռեակտիվ» տիպի հիդրոտուրբիններով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցումից, քանի որ այս տիպի հիդրոտուրբինները բացի այն, որ դեռևս լայն կիրառում չունեն և ռիսկային են շահագործման տեսանկյունից, ռիսկային են նաև Արզական-Երևան ջրատարի մոտ

17,0 կմ սկզբնական հատվածի թողունակության փոքրացման համար, որով ներկայումս տեղափոխվում է մինչև 1700,0 լ/վ ջրաքանակ: Նշված հիմնավորումը թույլ է տալիս եզրակացնելու, որ նման պայմաններում Արզական-Երևան ջրատարի մոտ 17,0 կմ սկզբնական հատվածի թողունակության փոքրացումը կարող է վտանգել Ընկերության կողմից ծառայությունների մատուցմանը: Միաժամանակ նույն գրության այս և մյուս կետերով հիմանվորվել է նաև այն հանգամանքը, որ տվյալ պայմաններում տեխնիկական հնարավորությունը նույնպես առկա չէ: Ուստի, տվյալ դեպքում առկա չէ Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի (այսուհետ՝ ԼՋ №0001 լիցենզիա) պայմանների 11-րդ կետի խախտում, քանի որ Ընկերությանը հնարավորություն է տրված մերժել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլտվության տրամադրումը, եթե առկա չէ տեխնիկական հնարավորությունը կամ եթե այն վտանգում է ծառայությունների մատուցմանը,

2) 2021 թվականի ապրիլի 2-ի №ՄՇ/7914 գրության կապակցությամբ Որոշման նախաբանի «զ» կետում ի թիվս այլ տեղեկությունների, Հանձնաժողովը նշել է, որ 2021 թվականի ապրիլի 2-ի №ՄՇ/7913 և №ՄՇ/7914 գրություններով Ընկերությունը Հանձնաժողովի դիրքորոշմանն է ներկայացրել Արզական-Երևան ջրատարի վրա «Նոր Հաճն» փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու գործարար ծրագիրը: Մինչդեռ 2021 թվականի ապրիլի 2-ի №ՄՇ/7914 գրությամբ Հանձնաժողովին ներկայացվել են դիտողություններ (դիրքորոշում, տեղեկություններ) «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առաջարկության վերաբերյալ,

3) մատնանշելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ, 37-րդ, 42-րդ և 63-րդ հոդվածները՝ Ընկերությունը պնդել է, որ սույն հարցով պետք է ընդունվեր այլ որոշում, որով մասնավորապես կհաստատվեր «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հայցվող վայրում ջրային համակարգին միանալու տեխնիկական անհնարինության

հանգամանքը և Ընկերության գործողություններին կտրվեր այլ գնահատակ, իսկ հարցին այլ լուծում,

բ. սույն թվականի մայիսի 4-ից հարուցվել է Որոշման վերաբերյալ բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 5-ի №ՍՇ/34.1-Մ2-4/1457-2021 գրությամբ,

գ. 2021 թվականի մայիսի 17-ին վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողովում տեղի է ունեցել քննարկում Ընկերության, «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ջրային կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում ընկերությունների ներկայացուցիչները պնդել են իրենց դիրքորոշումը,

դ. «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2021 թվականի հունիսի 3-ին Հանձնաժողով է մուտքագրել գրություն, որով ներկայացվել է «ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրամադրված եզրակացությունն առ այն, որ Արզական-Երևան ջրատարի հատվածում տեխնիկապես հնարավոր է տեղադրել փոքր հիդրոէլեկտրակայան, որի աշխատանքը հսկվելու է տուրբինի մուտքի և ելքի հատվածներում խողովակաշարի վրա տեղադրված ճնշման տվիչներով: Դրանք ապահովելու են փոքր հիդրոէլեկտրակայանից հետո անհրաժեշտ ճնշումը՝ ջրամատակարարման պահանջներին համապատասխան: Տվյալ դեպքում նպատակահարմար է օգտագործել հատուկ դիզայնով իրականացված ֆրենսիս տիպի տուրբին, որը հնարավորություն կտա խողովակաշարի վրա տեղադրել հիդրոկառույցը առանց նրա խզման: Տուրբինը պետք է տեղադրվի ջրատարին զուգահեռ կցորդված խողովակի վրա, ինչը կապահովի ջրատարի անխափան աշխատանքը կայանի կանգնելու դեպքում: Հիդրոկառույցի հզորությունը կկազմի մոտ 200 կՎտ, ինչը համապատասխանում է 22 մ հավելյալ ճնշման: Միաժամանակ, հաշվի առնելով, որ փոքր հիդրոէլեկտրակայանը կառուցվելու է խմելու ջրատարի վրա, սարքավորումները և կառուցման նախագիծը պետք է իրականացվեն հատուկ պահանջներով, որոնք կբացառեն ջրի աղտոտումը քսայուղերով և այլ նյութերով,

ե. Հանձնաժողովը, 2021 թվականի հունիսի 10-ի №ԳԲ/34.1-Մ2-5/1991-2021 գրությամբ Ընկերությանն է տրամադրել սույն թվականի հունիսի 3-ին ներկայացված «ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված եզրակացությունը և հայտնել դրա առնչությամբ մինչև սույն թվականի

հունիսի 16-ը դիրքորոշում հայտնելու անհրաժեշտության մասին, ինչը, սակայն, Ընկերության կողմից չի կատարվել,

զ. Ընկերության ներկայացրած վարչական բողոքի քննարկման համար էական համարվող հանգամանքները պարզելու նպատակով վարչական վարույթի ժամկետը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասը, երկու անգամ 10 օրով երկարաձգվել է,

է. իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետը, որի համաձայն՝ լիցենզավորված անձը տեխնիկական հնարավորությունների դեպքում պարտավոր է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կամ շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը, եթե այն չի վտանգում ծառայությունների մատուցմանը, չի հանգեցնում լիցենզիայի պայմանների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Լիցենզավորված անձի կողմից սահմանված՝ ջրային համակարգին միացման պահանջները պետք է լինեն հրապարակային, հիմնավոր և ոչ խտրական,
- Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզավորված անձանց կողմից սույն օրենսգրքի դրույթների, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իր իրավասությունների սահմաններում իրավասու է տալու խախտումները վերացնելու հանձնարարականներ և կիրառելու տուժանքների հետևյալ տեսակները, այդ թվում՝ նախազգուշացում.

2) Որոշումն ընդունվել է օրենքներին և գործող այլ իրավակարգավորումներին համապատասխան և դրա անվավեր ճանաչման հիմքերը բացակայում են: Մասնավորապես,

- Որոշումը կայացվել է Ընկերության կողմից թույլ տրված ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետի խախտման հիմքով, մասնավորապես՝ հիշյալ իրավակարգավորման համաձայն՝ Ընկերության կողմից «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլատարումը կարող էր մերժվել միայն այն պարագայում, եթե առկա չէ տեխնիկական հնարավորություն, եթե այն վտանգում է ծառայությունների մատուցմանը, հանգեցնում է լիցենզիայի պայմանների կամ օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Մինչդեռ Ընկերությունը, Հանձնաժողովին ուղղված իր որևէ գրությամբ, այդ թվում՝ վարչական բողոքով չի հիմնավորել վերը նշված հանգամանքների առկայությունը: Ընդհակառակը, Ընկերությունն ի սկզբանե համապատասխան թույլտվության չտրամադրումը հիմնավորել է նույն ջրատարի նույն հատվածում փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու իր մտադրությամբ, ինչը, սակայն, չի բխում ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետի պահանջից (Ընկերության կողմից առ այսօր Հանձնաժողով չի ներկայացվել նաև քննարկվող հատվածում կառուցման ենթակա փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու հայտ): Այսինքն, Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել Որոշման ընդունմամբ որևէ իրավակարգավորման խախտման հանգամանքը, վերջինս որևէ կերպ չի ապացուցել և չի հիմնավորել իր կողմից մատնանշված հանգամանքների առկայությունը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ավելին, սույն վարույթի արդյունքում ձեռք բերված մասնագիտացված կազմակերպության կողմից ներկայացված դիրքորոշմամբ հավաստվում է համապատասխան պայմանների ապահովման դեպքում քննարկվող թույլտվության տրամադրման տեխնիկական հնարավորությունը և դրանով ծառայությունների մատուցման չվտանգման հանգամանքը,

- Ընկերության կողմից ներկայացված փաստարկներն անհիմն են և որևէ կերպ չեն կարող դիտվել որպես «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի

կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլտվության չտրամադրման օբյեկտիվ պատճառներ, հիշյալ թույլտվությունն առկա պայմաններում ենթակա է տրամադրման: Անդրադառնալով Որոշման նախաբանի «զ» կետի առնչությամբ Ընկերության պնդմանը, հարկ է փաստել, որ այն չի համապատասխանում իրականությանը և, ըստ էության, Ընկերության կողմից հիշյալ դրույթի թերի ուսումնասիրության արդյունք է: Մասնավորապես, հիշյալ կետով Հանձնաժողովը փաստել է. «... 2021 թվականի ապրիլի 2-ի №ՄՇ/7913 և №ՄՇ/7914 գրություններով Ընկերությունը Հանձնաժողովի դիրքորոշմանն է ներկայացրել Արզական-Երևան ջրատարի վրա «Նոր Հաճն» փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու գործարար ծրագիր և հայտնել, որ իր 2021 թվականի հունվարի 15-ի №ՄՇ/634 գրությամբ ոչ թե մերժել է «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, այլ ներկայացրել է դիրքորոշում ջրատարի սեփականատեր ջրային կոմիտե, որպեսզի չթույլատրել որևէ այլ կազմակերպության նշված հանգույցում կառուցել փոքր հիդրոէլեկտրակայան՝ ներկայացնելով Ընկերության դիրքորոշման նախապայմաններն ու հիմանավորումները», այսինքն առկա է հստակ անդրադարձ մատնանշված՝ 2021 թվականի ապրիլի 2-ի №ՄՇ/7914 գրությանը,

3) Որոշումների փոփոխման կամ բեկանման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Հանձնաժողովը որոշում է.

1. Մերժել Ընկերության 2021 թվականի մայիսի 4-ի վարչական բողոքը՝ Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 19-ի №124Ա որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը՝ այդ մասին տեղեկացնելով Հանձնաժողովին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունիսի 2021թ.